

ՏԱՄՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարեկանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Ստաբիլիտետը զիւրում են ուղղակի
Твердость. Редакция «Менк»

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Հայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ Նամակ Նոր-Քայազէ-
տից: Ներքին լուրեր: ՍՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ
«Русский Курьер» լրագրի թղթակցութիւնը:
Արտաքին լուրեր: ԽՈՒՆ ԼՈՒՐԻՆԻ: ՀՅՈՒՄ-
ՈՒՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲՈՎԱՆՈՒ-
ԲԱՅՈՒՆ: Գիւղական հարց:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՔԱՅԱԶԷՏԻՑ

Սեպտեմբերի 5-ին

Նոր-Քայազէտիցները, թուով մօտ 400 տուն, գաղ-
թելով Հին-Քայազէտից այստեղ, 1828 թ-ից տի-
րել են այնքան տարածութիւն վարելահողերի և
խոտատեղերի, ինչքան այժմ կայ Եւ բնականա-
պէս, այն ժամանակ նրանք լինելով այժմեան
բնակիչների 2/3 մասը (այժմ 1,000 տնոյ աւել են)
և չունենալով մեծ թուով անասուններ, իբրև գաղ-
թակներ, բաւականացել են քիչ տեղեր վեր-
առնելով և, ինչպէս ստրկացած ժողովուրդ, չեն
վտանգացել ընդգրկմանը աղայի, առաջնորդի,
ղեկավարի կամ այլ նշանաւոր անձանց մեծ
չափով հողեր վեր առնելուն, սորանից էլ առա-
ջացել է մի տեսակ հողատիրութիւն և ամեն մի
մարդ տիրում է արդէն իր պապերի տիրած հո-
ղերը: Սրա հետևանքը այն է եղել, որ այժմ կան
ընտանիքներ 5—6 հոգուց բաղկացած, որոնք
տիրում են 100 արաբա տեղ խոտատեղերի և
այդ չափով էլ վարելահողերի, կան և այնպիսի
ընտանիքներ, 20—30 հոգուց բաղկացած, որոնք
ունեն միայն 10—20 արաբա խոտատեղեր և
վարելահողեր: Նոր-Քայազէտի հողերը, իբրև հա-
տարակալան սեփականութիւն, կարելի է հաստ-
րակալան վճարով մէկից առնել և առ միւսին,
չառ ունեցողից, քիչ ունեցողին, կամ աւելի ար-
դար լաւանի, այսպէս ասած նափարի (անձնա-
ւորութիւն) վրա. բայց այդ չէ լինում, որովհե-
տե հասարակութիւնը իր իրաւունքները պաշա-
պանել չը գիտէ: Կարծես, անցեալ տարի հաստ-
րակութիւնը միաձայն խնդրեց է ներկայացրել Ե-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒԼԱԿԱՆ ՀԱՐՑ

Պ. Կապէլինը կարծում է, որ Ռուսաստանի
գիւղացու համար բաւական են 1861 թ-ում որո-
շած ամենաբարձր հողաբաժնիները, իսկ որտեղ
այդպիսի հողեր բաւական չեն, կառավարութիւ-
նը պէտք է օգնէ ձեռք բերելու դրան: Եթէ որ ա-
րեւելի ազատ մնացած հողերը գիւղացու հարկա-
ւորութիւն համեմատ բաժանվէին նոցա, այն ժա-
մանակ գուցէ գիւղացիք նախադաս համարէին
միայն հողատիրութեան ներկայ կարգերի ու
ձեւերի հետ, առանց հողագործութեան բա-
րելաւանջելու մասին մտածելու: Այժմ երբ քան
տարի անցել է Ռուսաստանի գիւղական ժողովու-
րդի ստրկութիւնից ազատվելուց և մեծաքանակ
հողատէր—տանուտէրների հողերը միջաբանակ են
դարձել, ուստի պ. յօդուածագիրը յիշում է երեք
միջոցներ, որոնց առաջնորդում են գիւղական հար-
ցի հետազոտողները: Այդ միջոցներն են, առաջի-
նը՝ հող տալ հարկան արեւելի անբնակ հողե-
րից և կապալով տրվող տեղերից, երկրորդ՝ օդ-
նութիւն ցույց տալ գիւղացուց երբ նոցա մաս-
նաւոր հողատէրների հետ յօժարակամ համաձայ-
նութիւն են կայացնում հողեր գնելու, և վերջա-
պէս երրորդ՝ գիւղացիների ցանկութեամբ գաղ-
թիցնել նոցա պետական ազատ հողերի վրա, ար-
քունի դանձարանից օժանդակութիւն տալով:
Յօդուածագիրը կարծիքով այդ միջոցներից առաջի-
նը այսինքն՝ արքունի ազատ հողերից կապալով

րեանի նահանգապետին իրաւունք տալու հողերը
բաժանել անձնաւորութեանց վրա, բայց ինչպէս է
եղել, որ այդ խնդիրը ստորագրող հասարակու-
թիւնը այժմ ուղում է հողերը թողնել նոյն գրու-
թիւնի մէջ, այդ թողնում ենք տեղիս մի քանի
անձնաւորութիւնների խղճին պատասխանելու:
Ան առաջին անկանոն հողատիրութիւնից առաջ
է գալիս մի տեսակ վայրենի մրցում, և դա
բնական է. եթէ այսօր մէկը տեսնում է, որ հողի
պակասութեան պատճառով ինքն պէտք է քաղ-
ցած մեռնի և կոտորի իր անասուններին, նա
վաղօրեք, թէ և վայրենաբար, սկսում է խել հա-
րեանի վարելահողը, միւսի խոտատեղը: Ինչու,
որովհետեւ նա ուժեղ է (այստեղ միայն նա է բաղ-
դաւոր, ով լաւ գիտէ ջարդել, ձեռնել, սպանել),
այսպիսի վարելահողները միշտ յարգվում են,
երբ սորանց պաշտպան է մի հարուստ կամ նշա-
նաւոր մարդ: Այժմ—բաղի, կալսելու, ձեռնալ
պաշար պատրաստելու ժամանակ, այժմ, երբ հո-
ղագործի մահվան և կեանքի խնդրի ժամանակն է,
Նոր-Քայազէտում երաշտ տարի լինելու պատճա-
ռով (20, 30 արաբա խոտ տեղով տեղը չէ տուել
2—3 արաբա), կիրակէ օրերը, Նոր-Քայազէտը
դառնում է ձեռի, կուր, գլուխ ջարդելու ասպա-
րէզ, և այդ բոլորը կատարվում է խոտի կամ հո-
ղի համար:

Ամսոյ 2-ին եկաւ այստեղ Նոր-Քայազէտի նոր
գաւառագետ երեսնցի պ. Վասիլ Գեղաման,
որը, յոյս ունենալով, իր երկրասարակալան հոսանքով
կաշխատէ առաջն առնել այն բոլոր կամայակա-
նութիւնների, որոնք սովորաբար լինում են խո-
տի կամ վարելահողերի համար. նաև կաշխատէ
բարեւոյն ամեն մի նեղուածի, աղքատի և խեղ-
ճի դրութիւնը, ինչքան որ պարտական է ամեն մի
անձաւոր, որի սիրտը բարակում է մարդասիրական
զգացմունքներով: Բարեւոյն պարտին գաւառագե-
տ և շնորհաւորելով նրա նոր պաշտօնը, ցանկա-
նում ենք նորան իր այս ստակարկուած յաջողու-
թիւն, իսկ նոր-քայազէտիցիներին համեմատել ա-
նկալութիւն պարտին ամեն մի բարի գործի ձեռ-
նարկութեանը:

Մի քանի խօսք էլ ասելով տեղիս հողաբար-
ձունքի նոր ընտրութեան մասին, կը վերջա-

արվող տեղերից հողաբաժնի տալու, ոչ միայն օդ-
տաւէտ կը լինէր գիւղացուց, այլ նոյն իսկ կա-
ռավարութեան համար, որովհետեւ դա ամենահա-
տարակ, ամենաշահաւէտ միջոցը կը լինէր դա-
մական կողմից, այդ տեսակ արեւելի հողերից և
կամուտ ստանալու համար: Եթէ որ արեւելի հո-
ղերը փոխանակ կապալով տալու, երբեք չառ
սորը գնելով տային գիւղացիներին, արեւելի
գանձարանի համար դա աւելի շահաւէտ հողային
պահանջ կը լինէր: Թէ և չափաւոր, էլ չենք խո-
սում այն կողմնակի օգուտները մասին, որ գաւ-
նարանը և ժողովուրդը կունենային անբնակ տա-
րածութիւնները չէնացնելով: Մի և նոյն ժամանակ
այլ ևս հարկաւոր չէին լինի բաժանած հողերի
տեղական և կենտրոնական վարչութիւնները, որ
իր կարգին նշանաւոր խնայողութիւններ կանէր
դանձարանին:

Ուստի պ. Կապէլին ասում է, որ եթէ այդ մի-
ջոցով ևս չը կարողանան մեծացնել գիւղացուց հո-
ղաբաժնիները, այն ժամանակ կառավարութիւնը
իր միջնորդութիւնով պէտք է օգնէ գիւղացուց,
երբ սոքա մասնաւոր հողատէրներից կանխաձեռ-
նելով կապալով հող գնել: Վերև ասածի համե-
մատ, այդ օգնութիւնը պէտք է ցույց տրվի այն
գիւղացուց, որոնք անհրաժեշտ կարելու ունեն և
ոչ առհասարակ բոլոր հող գնել ուղղութիւնն:
Նա չէ ուղում երկար խօսել այն բանի մասին թէ
ինչպէս պէտք է օգնել գիւղացիներին մասնաւոր ան-
ձերից հող գնելու, որովհետեւ դրա համար հար-
կաւոր են դրամական, իրաւաբանական և տեղի-
նկական կառավարութիւններ, և իբրև դրա
պատրաստի օրինակ, մասնաւորաց է անում յետ
գնելու գործողութեանց կանոնները՝ միայն պար-

նեմ յօդուածաւ Ամսոյ 3-ին, տեղումս գումարից
«Մարդասիրական ընկերութեան» ժողովը: Կանո-
նաւոր էր թէ անկանոն այդ ժողովը, մենք չենք
խօսի դրա մասին. միայն մի քանի սրախօսու-
թիւններից յետոյ ընկերութիւնը խնդրեց նին հո-
ղաբարձունքին՝ Սարգիս քահանայ Աղարան-
ցին, պ. պ. Հայրապետ խաչատուրեանցին, Գեորգ
Բուռնագեանցին և Գեորգ Գալանցին վարել ի-
րանց պաշտօնը մինչև հոկտեմբեր ամիսը և վար-
ձել ուսուցիչներ, որից յետոյ կընտրվին նոր հո-
ղաբարձունքի Միայն մենք կարծում ենք, թէ
ինչու նոր-քայազէտիցիները դեռ չեն հատկացել
(գոնէ օրինակ ստնէին ուրիշ քաղաքներէ), որ
հողաբարձունքներ ընտրվում են ոչ թէ երեք ամ-
սով կամ մի ամիսով, այլ, շատ անգամ, երեք տա-
րով. և դա ունի իր օգուտները կողմերը, որով-
հետեւ հողաբարձունքն ուսումնական տարվայ սկզբ-
ից արդէն մոտածում և աշխատում է գտնել աղ-
բերներ, որ կարողանայ ժամանակին վճարել ու-
սուցիչների ուժերը, մինչև տարվայ վերջը: Բայց
ինչ կարող է անել այն հողաբարձունք, որից հոկ-
տեմբերին ուսուցիչները պէտք է վարձ պահան-
ջեն, իսկ սա դեռ ծանօթ չէ թէ օրտեղից են ըս-
տացվում փողերը: Ինչ և իցէ, ցանկալով հողա-
բարձունքներին հետևող, յաջողութիւն և գործու-
նայ առաջադէպ այդ հիմնարկութեան համար,
կաւելցնենք, որ մենք ունենք փողի մեծ հար-
կաւորութիւն ապագայում. ուրեմն խնայեցէք
քանի կարելի է հասարակութեան փողերը:

Ս. Տէր-Մարտիրոսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍԻ մէջ եղանակները կրկին տաքացան.
Թողը փողոցներում ամառանելի է: Փողոցները
գրեթէ ոչ մի տեղ չեն ջրվում, իսկ եթէ ջրում
են, ջուրը անում են ուղղակի չորացած աղբի
վրա, առանց աղբը մաքրելու: Այդ բոլորի վրա
սանիտարական յանձնաժողովը ուշադրութիւն չէ
դարձնում, ուշադրութիւն չէ դարձնում որ շատ
փողոցներ հոտում են, իսկ խոտութեամբ վերա-
բերվում է այս կամ այն մասնաւոր տան դուռ-
թիւն, որ համեմատաբար աւելի մաքուր է լինում,

զայրած: Վերջապէս այն դէպքում երբ այդ մի-
ջոցներն ևս չեն օգնի, հարկաւոր է դիմել վեր-
ջին միջոցին, այն է՝ գիւղացուց արեւելի ազատ
հողերի վրա գաղթեցնելու: Տեղափոխվելու հա-
մար օգնութիւն պէտք է ստանան այն գիւղացիք,
որոնց գաղթելով մնացեալ բնակիչները կը ստա-
նան լրակատար հողաբաժնի, իսկ միւսներին
միայն պէտք է դերացնել գաղթելու միջոցները
և տեղաւորվել: Մենք ի հարկէ շատ հեռու
գնալու չէինք արեւելի ազատ հողերը ցույց տա-
լու համար, բայց, դժբաղդաբար, պ. Կապէլինի ա-
սածները ուղիղ են: Բայց քանի ոչ ան-
յայտ դրութեան մէջ է գիւղացիների ազատ հո-
ղերի վրա գաղթելու թոյլտվութեան հարցը, իմ
կարծիքով, ամենաարդար և ամենապարտաւոր կը լի-
նէր որ գտնէ այն հողերը, որոնք գտնվում են պե-
տական գոյքերի վարչութեան տակ և իրենց տե-
ղի դրութեամբ այս կամ այն գիւղին մօտ են
գտնվում, որովհետեւ ինչ և իցէ պայմանով այդ
գիւղի բնակչաց, որով վերջիններիս դրութիւ-
նը զգալի կերպով կը թնջնանաւոր այն ինչ այժմ
գիւղացին վճարում է իւրաքանչիւր դեռեաւոր
հողի համար, 60 կոպէկից մինչև 1 ռ. 70 կոպէկ:
Մեր գաւառում կան գիւղեր, որոնք գրեթէ բո-
ւորովին խոտաբաղի տեղ չունեն, օրինակ Խ-
գիւղի բնակիչները միայն 10 1/2 գետնատին խոտա-
բաղ ունեն, իսկ միւս տեղերը—օր գլխաւորա-
պէս քարաբառու ու մշակելու համար անյարմար
են—հարկը բաւականանում են ցանքեր ու արօ-
տի համար: Հարցվում է ուրեմն, հարաւոր է
արդե՞ր, այդպիսի հանգամանքներում անասուն-
ներ պահել: Ինչպիսի կերակրէ, գիւղացին ամբողջ
ձմեռվայ ընթացքում իր անասունները, մանա-

քան թէ քաղաքի երկրորդական փողոցները:

ԴԻԼԻՋԱՆՑ մեզ գրում են որ Վազախի և
Փամբակի գրեթէ ամեն մի գիւղում անասուննե-
րի հիւանդութիւն կայ: Պատահում է որ քան
ընկան ունեցող երկրագործը բոլորովին դարձաւ
է մնացել:

Գարձեալ խնդրում ենք մեր բոլոր գաւառական
թղթակիցներին մաքուր, որոշ և պարզ կերպով
գրել իրանց թղթակցութիւնները: Եթէ ոչ, ամե-
նապա թղթակցութիւնն էլ, եթէ անմաքուր է
գրված, անտիպ կը թողնենք, որովհետեւ մենք
մեզ պարտաւոր չենք համարում փչացնել մեր
աչքերը վատ գրված յօդուածները կարդալով:

Վերջին անգամ կրկնում ենք մեր բաժանորդ-
ներին, որոնք մինչև այժմ իրանց պարտքը չեն
վճարել խմբագրութեանը, որ եթէ մինչև հոկտեմ-
բերի 1-ը նրանք չուղարկեն մեզ իրանց վրա մը-
նացած ապառիկը, մենք հոկտեմբերի 1-ից կը
դադարեցնենք նրանց անունով «Մշակ» լրագրի
ուղարկելը:

«Մեղուն» ցույց է տալիս, ինչպէս միշտ, որ
չէ հասկանում մեր ստանձնելը: Երբ որ մարդը
չը գիտէ ինչ ասի, շատ ձեռնառու է իրան ա-
ւելի էլ ապուշ ձևացնել: Այդ անում է և
«Մեղուն»: Նա շատ լաւ գիտէ թէ մենք
«խոսելիքներ» խօսքով ինչ ենք հասկա-
նում, շատ լաւ գիտէ որ մեր խոսելիքնե-
րիս ամփած բարձրագոյն ուսում տալիս, յե-
տադէմ, շահաւէր, դէպի ամեն նոր բան ան-
տարբեր, լուսաւորութեան թշնամի, խաւարաւոր
դասակարգը որքան արժանի է խոսելիքներից
կոչվելու: Նոյն իսկ այդ դասակարգին է պատ-
կանում և ինքն Միմեմոնեանց և նրա նմանները:
Ի հարկէ այդ տեսակների հետ համեմատելով մի
ամբողջ մարդ, մի թփուխեան, որ բնական
խելք ունի, հազար անգամ բարձր է: Ի դուր պ.
Միմեմոնեանց իրան ապուշ է ձևացնում և իբր
թէ չէ հասկանում մեր ասածը, կարգացողներին
գիտմամբ մտրեցնելու համար: Թող Միմեմոնեանց

III

Այս բանից յետոյ, պ. Կապէլին ասում
է, որ գիւղացուց հողային կարիքին բաւա-
կանութիւն տալը դեռ առաջին քայլն է
դէպի նոցա վիճակը բարելաւանելու, քանի
որ այդ հողերը գիւղացիների համար շնաստակար
և անյարմար կերպով են դասաւորված լինում
չառ անգամ, որի պատճառով նոցա զանա-
զան կախում են ունենում հարեան կալուա-
ծատիրոջից: Չանազան գիւղերի կամ անձանց
պատկանած հողերը հաւասար դժով չեն բաժան-
վում միմեմոնեանց, այլ տեղ տեղ զանազան ձեւեր
կապալով խոր կերպով մտնում են հարեանի տա-
մանը, կամ ինչպէս պատահում է երբեմն, դե-
տեղված են գիւղերի ուսանանքի մէջ: Հողի այդ-
պիսի դասաւորութեանը ուսուցիչը անուանում են
անդրասահմանութիւն (чрезпоселеніе, чрезпоселен-
ность): Այդպիսի հողերից օգտվում են կալուա-
ծատիրերը, որովհետեւ գիւղացիք օտարված են
լինում ամենածանր պայմաններով վարձել կալ-
ւածատիրոջ միջանկիւղ հողը միայն այն պատ-
ճառով, որ աներկիւղ տիրեն իրենց հողին, որով-
հետեւ կալուածատիրոջ հողի միւսմասը լինելու
պատճառով յառաջանում են շարունակ անբա-
ւականութիւններ, կռիւներ և փոխադարձ պա-
հանջներ: «Գիւղացու թէ գիւղացու ոչխարը, հաւը,
խոզը և այլն անցան պատահմամբ՝ կալուածատե-
րի հողի վրա—որ սահմանամերձութեան, գիւղա-
ցիների անհոգութեան և չակելու անհարգութեան

և «Մեդուս» իրանց համար պատիւ համարեն պաշտպան լինել խաւարատէր, յետադէմ, մոլեւանդ, ամբողջ օր թուղթ խաղացող, նիւթապաշտ, տղետ դասակարգին, որ խնտելիքնցիայի անուն է կրում, բայց մենք այդ դասակարգը իսկական ինտելիգենցիա չենք համարում և նրանից շատ բարձր ենք դատում ամբողջ մարդկանց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«РУССКІЙ КУРЬЕРЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂՂԻՆ ԹԱՅՈՒԹԻՒՆԸ

Վերջինիս լրագրի Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետեւեալը: «Առաջվայ ժամանակներում սովորութիւն էր, որ սուլթանի դահլիւզութեան տարեդարձին թիւրքիայի քրիստոնէականների ներկայացուցիչները և առաջնորդները բոլորը միասին հանդիսւոր կերպով գնում էին պալատը սուլթանին շնորհակտութեամբ համար: Այդ օրը տիեզերական պատերազմը յայտնում էր սուլթանին թիւրքիայի բոլոր քրիստոնէականների հպատակութիւնը և հաւատարմութիւնը, բայց մի քանի ժամանակից այդ սովորութիւնը գործածութիւնից ընկաւ, որովհետեւ պատերազմները չեն համարձակվում բարձր խօսել իրանց հօտի դէպի օսմանեան գահը ունեցած հպատակութեան և հաւատարմութեան մասին: Այս տարի նկատեցին, որ յունաց և հայոց պատերազմները պալատը գնացին առանձին առանձին և այն էլ տարեդարձից մի քանի օր յետոյ: Տիեզերական պատերազմը շատ լաւ ընդունվեցաւ պալատում և մի ժամից աւելի մնաց սուլթանի մօտ: Նորին սրբազնութիւնը օգուտ քաղեց այդ դէպքից, և խօսեց սուլթանին հետ յունական գործերի դրութեան մասին: Ձեռք յայտնի է, որ Բ. Գուլը մի քանի ժամանակից արդէն աշխատում է խելքիստոնէականներից այն արտօնութիւնների մեծ մասը, որ նրանց շնորհված է եղել Կ. Պոլսի առումի ժամանակից: Յունաց պատերազմը Բ. Գրան դիտարկութիւններին իրիտ կերպով ընդգիծմաբերութիւն է ցոյց տալիս: Այս անգամ տիեզերական պատերազմը ապացուցեց սուլթանին այն բոլոր անյարմարութիւնները, որ կը ծագեն թիւրքական տնտեսութեան և միջոց պատահում է, իսկայն կը սկսվեն կամայական տուգանքներ, որոնք ծանր են գիւղացու համար: Նոյա յարաբերութիւնները սուր բնատրուրթիւն են ստանում, փոխարկվում են չարակամութեան ու թշնամութեան... Անաստեններին ու ձիւրին կալուածատէրերի հողից անցկացնելը՝ նամանակ պատճառ է դառնում փոխադարձ վիճաբանութիւնների, դատերի և վերջին դէպքում սաստիկ ճնշում ու վնասում է գիւղացիներին» (էջ 595 և 596): Նոյնպիսի վէճեր բաղմամբ են գտաւում, նմանապէս կան դէպքեր, որ մի գիւղի անասունները տանում են արածացնելու հարեան գիւղի հողերի միջից, ի հարկէ մեծ վնաս պատճառելով ճանապարհի ասիւրի բոյսերին: Անյարասանութիւնը վերացնելու համար, յօդուածագիրը առաջարկում է միջոց տալ գիւղացու ու հողատէրերին, որ նորա բարեօթար կամքով վերացնեն այդ անյարմարութիւնը, իսկ եթէ որոշեալ միջոցին համաձայնութիւն չը կայանայ, այն ժամանակ կողմերից մէկը խնդիրը, կառավարութիւնը պէտք է ինքն անէ հարկաւոր անօրէնութիւնը:

պատճառով—անխառնափնէ և միշտ պատահում է, իսկայն կը սկսվեն կամայական տուգանքներ, որոնք ծանր են գիւղացու համար: Նոյա յարաբերութիւնները սուր բնատրուրթիւն են ստանում, փոխարկվում են չարակամութեան ու թշնամութեան... Անաստեններին ու ձիւրին կալուածատէրերի հողից անցկացնելը՝ նամանակ պատճառ է դառնում փոխադարձ վիճաբանութիւնների, դատերի և վերջին դէպքում սաստիկ ճնշում ու վնասում է գիւղացիներին» (էջ 595 և 596): Նոյնպիսի վէճեր բաղմամբ են գտաւում, նմանապէս կան դէպքեր, որ մի գիւղի անասունները տանում են արածացնելու հարեան գիւղի հողերի միջից, ի հարկէ մեծ վնաս պատճառելով ճանապարհի ասիւրի բոյսերին: Անյարասանութիւնը վերացնելու համար, յօդուածագիրը առաջարկում է միջոց տալ գիւղացու ու հողատէրերին, որ նորա բարեօթար կամքով վերացնեն այդ անյարմարութիւնը, իսկ եթէ որոշեալ միջոցին համաձայնութիւն չը կայանայ, այն ժամանակ կողմերից մէկը խնդիրը, կառավարութիւնը պէտք է ինքն անէ հարկաւոր անօրէնութիւնը:

IV.

Նրբոր գիւղացու հողատիրութեան ձեւերը կանոնաւորել ենք ցանկանում, այն ժամանակ պէտք է մտածենք թէ ինչպիսի իրաւունքներ պէտք է ունենայ գիւղացին իր հողատիրութեան վրա: Ռուսաստանի ազգայնականութեան մեծ մասը պահպանում է համայնական հողատիրութիւնը: Այդ ձև հողատիրութեան մնացորդները ներկայումս մենք տեսնում ենք հայ գիւղացու մէջ: Քայանի է որ մարդագետները այժմ էլ պատկանում են

քիայի համար, եթէ կիրառութիւն օսման նեան միւնիստրների ցանկութիւնները: Յայնքին մեծ անբաւականութիւնը օգտակար է լինի թիւրքիայի համար դժուար հանգամանքների ժամանակ: Սուլթանը ըստ երեւոյթին համոզվեցաւ պատերազմի պատճառաբանութիւններով և յոյս ունեն, որ այդ նշանաւոր հարցը յօգուտ յոյների կը վճռվի:

Հայոց պատերազմը նոյնպէս ընդունվեցաւ սուլթանի մօտ մի շարքովայ մէջ երկու անգամ: Պատերազմը պնդում էր իր հրաժարականի վրա, բայց սուլթանը ստիպեց նրան յետ տանել իր խնդիրը: Պատերազմը սուլթանին ներկայացրեց մի յիշատակագիր, որի մէջ թուում է այն բոլոր թշուառութիւնները, որոնցից տանջվում են հայերը և խնդրում էր սուլթանին նպաստել գործերի պայմանի դրութեան փոփոխութեանը: Պատերազմը աւելացրեց, որ եթէ այդպիսի դրութիւնը կը շարունակվի, այն ժամանակ ինքն պատասխանատու չէ կարող լինել հայերի մէջ հանգստութիւն պահպանելու համար: Այդ նշանաւոր դոկումենտը պատերազմութեան գործեց սուլթանի վրա և նա իր մօտ կանչեց պատերազմին, խօսում էր նրա հետ իր հպատակ հայերի հաւատարմութեան մասին և խոստացաւ լուրջ կերպով զբաղվել նրանց դրութեամբ: Սուլթանի խոստումները պատճառով պատերազմը ստիպված էր յետ տանել իր հրաժարականը և սպասել խոստումների կատարմանը: Այստեղ չեն հաւատում, որ այդ խոստումները շուտով կիրառութիւն: Տեղական մամուլը զգուշացաւ դատարկութիւններ աւելուց սուլթանի և պատերազմների մէջ կատարված անցքերի մասին. լրագրիները խօսեցին միայն պաշտօնական այցելութեան մասին: Այն ինչ այդ դէպքը Բ. Գրան և պալատի մէջ անհամաձայնութիւն գցեց: Այն ժամանակ, երբ լրագրիները խօսում էին սուլթանի կարգադրութիւնների մասին հայոց պատերազմի վերաբերեալ, Բ. Գուլը պաշտօնապէս հերքեց այդ կարգադրութիւնների գոյութիւնը, որոնք իրապէս գոյութիւն ունէին, բայց Բ. Գրանը անյայտ էին. այդ հանգամանքը վկայում է, որ սուլթանը

ամբողջ հատարակութեամբ անբաւան, և միայն հնձելու միջոցին բաժանվում են գիւղացիներին մէջ: Այն և այլ պարագաներ, ինչպէս «մօտեմա», «համբաւութիւն» (որոց մասին ես կը խօսեմ մի այլ անգամ) որոնք համայնական հողատիրութեան մանրանկարներն են: Բայց լրագրիները թէ ինչ է ասում պ. Կավէլին այդ հարցի վերաբերութեամբ: «Մեր կրթված ու մտածող մարդկանց բազմութիւնը, այդ հարցը այնպէս էր դնում ու վճռում, ինչպէս եղել էր Եւրոպայում: Այդ հայեացքը համեմատ, համայնական հողատիրութիւնը մի անյաղթելի պատուար է քաղաքային ու տնտեսական զարգացման համար, երկրադրական պարագայով, կանոնաւոր գիւղատնտեսութեան և վերջապէս՝ մարդկանց մէջ իրաւաւոր յարաբերութիւնների հաստատելու համար: Համայնական հողատիրութիւնը—ասում են այդ հայեացքի կուսակիցները—ամեն տեղ գոյութիւն ունէր բարբարոսական ժամանակներում, և ամեն տեղ՝ քաղաքային ժամանակներում: Եւրոպայում էր անհատական անձնական հողատիրութեան: Ռուսին նոյն ճանապարհով գնալու ենք և մենք: Սակայն ոչ ոք զիտ չէ հերքած և չէր կարող հերքել այն դիտողութիւնները թէ անհատական հողատիրութեան սկզբունքը փոքր հողատիրութեան վրա կործանիչ ազդեցութիւն ունի: Անձնական սեփականութեան իրաւունքը, առ և ծախսի առարկայ, սպառնք է դարձնում հողը, որը՝ հարուստների ու չքաւորների անհաւասար մրցման ազդեցութեան տակ, սակաւ առ տակաւ անցնում է առաջինների ձեռքը, կենսաբանական է նոյա մէջ և վաղ թէ ոչ նոյա ձեռքը կը մասնէ անհող ու բաժնեգրով բազմա-

փոքր և ուշադրութիւն դարձնում իր միւնիստրների վրա: Բ. Գուլը տեսնում է, որ քիչ քիչ լրվում են իրանից իր արտօնութիւնները: Քրիստոնէայ ժողովուրդների ներկայացուցիչները անմիջապէս յարաբերութիւն ունեն սուլթանի հետ: Այժմ միւնիստրները ամենափոքր ազդեցութիւն անգամ չեն ունենայ պատերազմարանի վրա: Եթէ գործերը այդպիսի շաւղով կընթանան, այն ժամանակ Բ. Գուլը միայն պատմական բաւ կը լինի:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԻ

«Հիւսիսային հեռագրական» ընկերութիւնը հաղորդում է Պեշաից որ խօրվատիայի միւնիստր Բէդէկովիչ հրաժարական տուեց իր պաշտօնից: «Կ. Պոլսի (Մասիս) լրագրից հաղորդում է հետեւեալը: «Այս առաւ «Վարդի» մէջ ցաւելով կը կարգաւոր որ հայերէն «Մանգումի Եֆեմար» լրագրին իր վնասակար պարունակութեանց պատճառաւ նախարարական հրամանաւ դադրեցաւ: «Մասիս» լրագրում կարգում ենք հետեւեալը: «Մանգումի Եֆեմար» իր երկի թուով կարծիք կը յայտնէ թէ իր դադարման պատճառ եղած լինի պատերազմական խնդրով մասին իր վերջին հրապարակութեամբ: «Կ. Պոլսի (Phare du Bosphore) լրագրից հաղորդում է Մասիս» լրագրից հետեւեալն է հաղորդում էլը հաւատեն թէ վեհ. սուլթանը հրաման քրե է Բ. Գրան, որպէս զի հայաբնակ գաւառաց կացութեան վրա մանրամասն և ճշգրիտ տեղեկագիր մը խնդրի Փարը-Աօիոյ վարչական իշխանութիւններէն: Այս տեղեկագիր վեհ. սուլթանին պիտի ներկայացվի: «Новое Время» ուսուց լրագրից հաղորդում է որպէս ստորոյ, որ Շէյխ-Իրադուլլահ կարողացել է իր հպատակ քրեդերին ընդունել տալ ուսուց դաւանութիւնը և ուղարկել է արդէն պատգամաւորներին Ռուսաստան այդ խնդրի մասին ուսուց եկեղեցու հետ բանակցելու համար: «Temps» լրագրին հեռագրում են Լճիդոնից. «Արտասանման» բոլոր թղթակիցները, մասնաւոր Վիեննայի լրագրիները շատ են հետաքրքրվում Վրաստանի Կոպէնհագեն գնալով: Այդ հարցի մասին կարծիքները երկուսի բաժանվեցին: Մի քանիսը կարծում են, որ դիտարկութիւն կայ մի զանալկութիւն կապել աւստրո-գերմանական դաշնակցութեամբ ընդդիմադրելու համար, միւսները ասում են, որ Կոպէնհագեն մէջ կայացած համաձայնութիւնը բացառապէս եւրոպական խաղաղութիւնը պահպանելու համար է: Այլ ասալ ունենալով Վրաստանի բնատրութեան յատկանիշ-

թիւ անձանց, որոնք այդ պատճառով դառնում են պրոլետարների ու վարձկանների: Որ դա լոկ ենթադրութիւն չէ, այլ իսկական փաստ, ապացուցվում է ոչ միայն Մալթոսիայում, այլ և Հար. Եւրոպայում: արած անհամար դիտողութիւններով: Բարձր կուստրա ունեցող երկրներում, ժողովրդի նշանաւոր մասը՝ գործարանային (фабричный) և աւետարական գործունէութեամբ է պարագում—ասում է պ. Կավէլին,—ուստի այնտեղ այնքան նկատելի չեն անհոգները: Իսկ որտեղ այդպիսի պարագայով չեն անհոգները: Եւրոպայում են զարգացած, որտեղ ժողովրդի մեծ մասը հողից է կերակրվում, այնտեղ մանր հողատիրութեան խանգարումը կորստաբեր ազդեցութիւն է ունենում ժողովրդի բազմութեան ապրուստի ու բարեկեցութեան վրա: Այս ահա այդպիսով առաջացան տեսակ տեսակ հայեացքներ այդ հարցի վրա և այն մարդիկ՝ որոնք գիւղացու պարագայ բարեկեցութեան և կառավարչական օրէնքների հրապարակութեան մէջ են տեսնում, սաստիկ պաշտպանում են համայնական հողատիրութեան կերպը և մինչև անգամ ուղում էին մտնել դրան այն տեղերում՝ որտեղ արդէն արմատացել է անհատական հողատիրութիւնը: Քաղաքային ժողովրդի մարդիկ կարծում են, որ համ. հողատիրութիւնը խանգարում է անհատական զարգացմանը և գիւղական արդիւնաբերութեանը: Ահա զանազան կարծիքներ: որոնց հարկաւոր է լուծել: Եթէ որ—ասում է պ. Կավէլին—ինչպէս ցոյց են տալիս իրողութիւնները, համ. հողատիրութիւնը ամենալաւ և ամենազգու միջոցն է ամբողջ հողազգու կկեղտ և ի վնաս ու կորուստ ժողովրդի մեծա-

նեքը, երկրորդ կարծիքը աւելի հաւանական է «Morning Post» լրագրին հեռագրում են Բերլինից, որ Վրաստանի Կոպէնհագեն գնալու մասին Բերլինի մէջ լուր տաւանաւոր պէս, գերմանական դեսպանը դանիական կառավարութեան մէջ, որ արձակուրդ էր ստացել, հրաման ստացաւ անյապաղ իր տեղը վերադառնալ: Իր կողմից Լճիդոնի լրագրի երկից է կրում, որ Վրաստան ուսուց կառավարութեանը մի քանի գիւղացիներ չանի Բոլշակովի և Արեւիկան Բուսիլայի վերաբերութեամբ, որպէս զի վրա փոխարէն Անգլիային կատարեալ ազատութիւն տրվի եգիպտական գործերի և Քր. Բան-ձիւնական կուս. վերաբերութեամբ:

— Գործերը Սերբիայի մէջ վերջին ժամանակներում շատ նպաստաւոր չեն նոր թագաւորութեան ներքին զարգացման համար: Սեպտեմբերի 20-ին կատարված սկուպլինայի անգամների ընտրութիւնները այնպիսի հետեւեալներ ունեցան, որ կարող են գործին վատ վախճան տալ: Ընտրված են 34 անգամներ կառավարչական կուսակցութիւնից, 75 արմատականների, 37 առաջադէմներ և 13 յետադէմներ: Սահմանադրութեան համեմատ թագաւորը իրաւունք ունի պատգամաւորների իր ցանկութեան համեմատ նշանակել և այդպիսով մեծացնել կառավարչական կուսակցութիւնը: Բայց այդ բանը, Պրապայի «Politik» լրագրի կարծիքով, ոչինչով չի փոքրացնի կառավարութեանը հասցրած հարուածը: Եւր Սերբիան թագաւորութիւն յայտնվեցաւ, Պրոչանայի միւնիստրութիւնը յաղթեց արմատականներին, բայց վերջինները պարտալ չը մնային: Ամենից առաջ նրանք հրաժարվեցան Սկուպլինայի անգամութիւնից, բայց կառավարութիւնը խանդաբեց նրանց դիտարկութիւնները, յայտնելով նրանց իրաւասութեան ժամանակը վերջացած: Լրացուցիչ ընտրութիւնները կառավարութեան ցանկութեան համեմատ չը կատարվեցան և երևաց, որ արմատականները Սերբիայի մէջ շատ կուսակցիցներ ունեն, այսինքն, որ սերբիական ժողովուրդը համամիտ չէ կառավարութեան հետ: Գիտար է զուշակել, թէ այդ ընտրութիւնները ինչ հետեւեալներ կունենան:

— Զարբերից հաղորդում են, որ խօրվատական պատգամաւորները չեն մասնակցել վիճաբանութիւններին յայտարարելով հարցը վերաբերութեամբ: Լուրեր տարածվեցան, իր թէ ապստամբները անտառի մէջ էին հաւաքվել, բայց այդ լուրերը յետոյ հերքվեցան: Պոզովի և Բիչլինցի մէջ անհարգութիւններ պատճառեցան: Ապստամբները կամեցան էին յարձակվել գերական ձիւնարկութիւնների վրա, բայց յետ մղվեցան դրբերից: Այդ կուս. ժամանակ տարիսից 2 հոգի սպանվեցան, 34 վիրաւորվեցան:

— Վատիկանից «Polit. Corresp.» լրագրին հաղորդում են, «Զը նայելով մի քանի անձանց ցանկութեանը, որ պապական և պրոսական կառավարմանը վերաբերող հողատիրութիւնը մի քանի կատարականների ձեռքում կենտրոնանալու դէպք, այն ժամանակ համ. հողատիրութիւնը ոչ միայն պէտք է պահել, այլ և պահպանել և վաւերացնել օրէնքով: Մանաւանդ այդ անհրաժեշտ է մեզանում իրենաշուկող պարագայում փոքր զարգացման և երկրագործ ժողովրդի ահալին բաղմամբանութեան պատճառով... Սակայն եթէ համ. հողատիրութիւնը ներկայացնում է դժուար պատուար գիւղական ամբողջ հողաւորի լինելու դէպք, այն ժամանակ նա իր այժմեան ձեռք անկարծիք ունի և շատ թերութիւններ: Համ. հողատիրութեան անհամը ուղից ու ձեռքից կապված է, նա չի կարող իր ուղածի պէս մշակել հողը, այլ կամայ կամայ պէտք է հնազանդվի դաշտավարութեան այն ձեւին, որին հետեւում են նրա միւս անդամակիցները: Այդպիսի դէպքում տնտեսութիւնը բարեւթիւ նախաձեռնութիւնը անհնար է: Հայրաւոր է որ գիւղի բոլոր անդամները համաչէին այդպիսի բարեւթիւման հարկաւորութիւնը. իսկ դա շուտ միջոցում է լինում, մանաւանդ քանի որ տնտեսութիւնը բարեւթիւման և նրան այլ ձև տալու անհնար անձնական փորձերը անհնար են, մեծամասնութիւնը լաւ օրինակներ չի ունենալ իր աչքի առաջ՝ որոնք նրան դրել են հետեւ լաւ օրինակներ: Այդ պատճառով էլ այդ մեծամասնութիւնը—ինչպէս որ տեսնում ենք՝ լուրեր և յամաւ կերպով մնում է իր հին հողագործութեան կարգերով աւելի երկար՝ քան թէ պահանջում էին նրա ակներև սեպական շահերը: Բայց դրանից՝ քանի որ այժմ ամեն տեղ—համ. հող. ունեցող հատարակութիւնների մէջ—աւելի կամ պակաս յաճախ պատահում են հողերի վերահաստատութիւնները հողա-

(Կը շարունակվի)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ
ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՄՆ
ԴԱՆՈՑ

(ԿՈՒԿԻՍ, ՎԱՐԱՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԳԷՊ)

ՀԻՄՆԱԽՈՐ ԱՄԵՆ ՕՐ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ:

ՀԱՄԱՐՈՐՀՈՒՐԻ, (ԿՈՒԿԻՍԻՄ) ՀԻՄՆԱԽՈՐ
նոցի բոլոր բժշկաների չորեքշաբթի և շա-
բաթ երեկոյան 6 1/2—7 1/2 ժամը:—Հիւան-
դանոցի բժշկաները՝ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ, ԲՈՒԿ-
ԿՈՎԱԿԻ, ՍԱՐԳԻՍԻԱ—ՇՁԵՐԲԻՆԻԱ, ԲԵՅԻ և
ԲԱՐԱՅԵԱՆ:

Լոյս տեսաւ «Գինեգործութիւն» անու-
նով բրոշուր. ծախվում է «Կենտրոնական»
և «Կովկասեան» գրառատանոցներում:
Գինն է 30 Կ. գումարով առնողներին զի-
ջուցն կը լինի: Գաւառներից կարող են
պահանջել այս հասցեով. Малая Орбе-
лиановская № 22, соб. д. Араму Ха-
разьянц.


Վ. Ռ.

ԳԼՕԲՈՒՄԻ ԳՐԻՉՆԵՐ

Արմենյով կարելի է գրել ամենակապիտ

Թղթի վրա:

Միակ գործակա
ԼԻԱԿԱՆ Խ
տեղը կան ամեն
րի համար մեծ
ԳՐԻՉՆԵՐ
էման քան թէ
նոցիպէս ԹԱՆԱԲ,
ներ, զմուռ, ՄԱ
րիչներ, պենալ,
ներ, ծխախոտի
ներ, ածելիք, ս
ներ, ԲԱՋԱԹՈՒՐ
րարիւ կակերու
ՏԻՆԵՐ, վազգոյ



լուծիւն ԱՆԳ-
ԱՆՈՒԹ: Նոյն
տեսակ ձեռագրե-
քանակութեամբ
ամեն ձևի 250/
ուրիշ տեղ: Կան
Թուղթ, տեղադր-
ՏԻՆԵՐ, քարեդ-
ԳՐԱԿԱՆՈՒ, քսակ-
ամաններ, ՄԱՐԱՏ-
րոցներ, խալիսա-
ՄԱՀԱԿԱՆ, վե-
համար իրեր, ԳՕ-
ներ, ՄԱՏՈՒՑԱ-

ԲԱՆՆԵՐ, բրիտանական մետաղից իրեր, ԼԱՊ-
ՏԵՐՆԵՐ, գզալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ,
երես լուսնալու ամաններ, Ֆիլտրա, կրան-
չիցներ, սլոնո միւրաններ, շորի շէշտակա-
զլի, երկաթե թելերից, ձիու համար Մա-
կենտոյններ: Բժշկական թուղթ փաթեղից-
տի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹ:

46—100

ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ութերորդ դասադասից ԱՌԱՋ-
ՆԱԿԱՐԳ զիպրովով աւարտած և դասաւարտեան մէջ փորձուած մի ՀԱՅ
ՕՐԻՈՐԴ ցանկանում է փորձուհու պաշտօն ստանալ հայոց օրիորդական ու-
սումնարաններից մէկում: Հասցէն թողնել «Մշակ» խմբագրատանը:

1—1

Գիւղատեսական մեքենաների մասնագէտ

ԼԵԻՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆՑ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Բերել եմ տալիս և սարքում եմ գութաններ, ցանելու, հնձելու, կալելու
և դարման շինելու մեքենաներ, շոգեշարժ ջաղացներ և ձիւթահաններ, հա-
նում եմ առններ և սարքում եմ գանազան տեսակ ջուր բարձրացող մեքենա-
ներ: Չը զիտեցողներին սովորեցնում եմ նոցա բանեցնելու կերպը:
Պատկերազարդ ցուցակա մեքենաների ուղարկում եմ ցանկացողներին ձրի:
Գիմը այս հասցեով՝ Въ Вагаршанатъ, въ контору Эчмиадзинской Па-
ровой Маслобойни.

Л. Е. Ханъ-Агову.

2—6

Դուք եկաւ մամուլի տակից ԴՐ. ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑԻ
Քաղաքաւարտեսական դասախօսութիւնների տառնին տետրը

ԱԶԳԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ և ԱԶԳԱՐԱԿԱԶԱԿԱՆ ՇԱՐ-
ԺՈՒՄՆԵՐԸ

Գինն է 40 կոպէկ:

Ցանկացողները թող բարեհաճեն ստորագրուել ԲՈՂՈՐ ԵՐԹԸ դասա-
խօսութիւններին, փճարելով միայն 1 ր. 50 Կ:

Գիմը ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ և ԿՈՎԱԿԱՆԵԱՆ գրառատանոցները
և «ՄՇԱԿԻ» խմբագրութեանը:

9—10 (1)

Մ. Ն. ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՇԵԱՏ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵՆԱՆՍԿԻ ԲԱՋԱՐ, ԿԱՏՈՒԶԵՍԿԱՑԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, գանազան աթոռներ 35 րուրուց գլուխը, բազկա-
թոռներ 6 ր., դիվաններ 12—25 ր., կաշեյի, մանիական աթոռներ և այլն:
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պա-
հարաններ, ծալիղ սամովարներ: Զեմզաններ 2 ր. 75 Կ.—26 ր., սակի-
յաժ ձեռքի և ուսից կախելու, ճանապարհի սուվաններ, ձԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿԱՆ 5
ր. 50 Կ.—30 ր.:

Սամովարներ, խոհանոցի պղնձե ամաններ, կոֆէյնիկ, թէյամաններ, ութո-
ներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒՆԱԼՈՒ ՄԱՐ-
ՄԱՐՈՒՆԻ ամաններ 40 ր., երես լուսնալու պղնձե և ժեստի ամաններ:

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 ր., տուրետի հայելիներ 2 ր. 40 Կ.—13 ր., գանազան
մետաղների մամակներ 1 ր.—15 ր., սեղանի դռներ 4 ր. 50 Կ. և թանդ,
թէյի դռներ քաժէի, մեխիկոյի, ինչպէս և բրիտանական արծաթից աւելի
էման, քան թէ ուրիշ տեղ, դանակներ, պատառաքաղներ 2 ր.—26 ր.:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՈՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և
մարդկերանց, ուսական և անգլիական պողպատե և երկաթե դանակներ, յայտ-
նի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ
10 Կ. և աւելի:

ԲԵՂՈՎԵՐՆԵՐ գանազան տեսակի 3 ր. 50 Կ.—35 ր., պատրոններ ըէփոլի-
ներ համար, հրացան 6 ր. և աւելի, գանազան վեշալիաներ, կշիւքներ: Անդ-
լիական և ամերիկական կէճուկա 50 Կ.—2 ր. արշինը:

Մշտապէս ունեմ 10,000 Ֆ. ԹԵՑ Պօպօլ կըլայրներ, կաֆէ ՄԻՆԵԼՍՈՆԻ,
թէյի համար խմորեղէն էյնեմ, ԲԵՆԴԱՐԻԻ սիգարներ, հոտաւէտ ջուր (Օղը-
կօյն) ձեւից փողիք, պուշրա, դիցերինի սապօն և այլն, աւելի էման քան թէ
ուրիշ տեղ:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ գալանտէրէյի գանազան ԱՊԱՆԲՆԵՐ, ծխախոտի արկը,
գրամարկը, քաւիներ, սանդղներ, շալիկներ, լայիկ ձեռնոցներ կանանց, զինուո-
րական գամէի ձեռնոցներ, գարուս, թելեր, բրձիկ և մարմարիների թանաքաման-
ներ, միլրամաններ, գրիչներ, մոտիաներ, գրչալիթներ, սաւրգուշ, փափի թուղթ,
ծրարներ և այլն:


ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գի-
նու և զեղատան ապրանքների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ:

Վերև յիշված բոլոր առարկաները ունեմ մեծ քանակութեամբ և ստանում եմ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս:

Առևտրականներին զիջումն և առանձին պայմաններ:

Օտարադաղաքացիք կարող են գիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЪ-НИКОГОСОВУ.

49—100



ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ջ Ի Ն Փ Ե Ր

Ն Ի Ի Ռ Օ Ր Կ Ի Մ Է Ջ

ԿԱՐԵՄԲԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ:

Ծախում է ամենալաւ համարված կարեմքեւաններ նպաստող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք
պահպանում են փշաւալուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թելը ընթացք ունեն աշխատանքի ժամա-
նակ, այնպէս որ ամենալոյզը և ծեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց օյժերը սպառելու: Ծախվում է

ԿԷՍ ՄԻԼԻՐՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱԻԵԼԻ ՏԱՐՎԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Ձերերի կարեմքեւանների համար:

ՆԱԽԱԶԳՈՇՈՒԹԻՒՆ. Ձերերի իսկական կարեմքեւանները մեծ վարկ ունեն, որովհետև իրանց գեղեցիկ յատկութիւններով ամենքին զմայլեցնում են և այդ պատ-
ճառով ուրիշ գործարանները նրանց կեղծում են և ծախում են Ձերերի իսկական կարեմքեւանների տեղը: Զգուշացնում եմ ձեզ, որ Ձերերի իսկական իւրաքան-
չիւր կարեմքեւան The Singer Manufacturing Co-^o ֆիրմայից ունի գործարանի գրօշման մեքենայի կոթի և մամուլի վրա. The Singer Manufacturing Co-^o,

Գ. Ն. Ե. Տ. Գ. Լ. Ի. Ն. Գ. Ե. Բ. Թ. Գ. Լ. Ի. Ս. Գ. Օ. Լ. Օ. Վ. Ե. Ս. Կ. Ի. Փ. Ղ. Ո. Ց. Տ. Ո. Ն. Մ. Ի. Բ. Ի. Մ. Ա. Ն. Օ. Վ. Ի.

ԲԱՐՈՒՄԻ մէջ Պօլիէյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի:

ԲՈՒԹԱՅԻՍԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Շնէյդերի:

ԲԱՎՈՒԻ մէջ Միխայլովսկայա փողոց, տուն Միրզա-Աւագովի:

Խաբանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Ձերերի ամենաօգտակար և իսկական կարեմքեւան կարելի է գինը փոքր մուտքերով, այսինքն շարաթական
1 ր. 50 Կ. վճարելով առանց իսկական զինք բարձրացնելու: Հնացած մեքենաները խանութը փոխում է:

19—50 (1)